

ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ԱՊՐԻԼ ԱՄԻՍՆԵՐԻՆ

Luys Lույս®

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ 1
   1.1. Արդյունաբերություն 2
   1.2. Շինարարություն 4
   1.3. Ծառայություններ 4
   1.4. Առևտուր 5
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ 6
3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ 8
4. ՓՈԽԱՐԺԵՔ 9
5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ 10
   5.1. Բյուջեի հարկային եկամուտները 10
   5.2. Պետական պարտք 11
6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ 12
   6.1. Գնաճ 12
   6.2. Ավանդներ 13
   6.3. Վարկեր 14
   6.4. Դրամական փոխանցումներ 16
7. ԱՄՓՈՓՈՒՄ 16

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ տնտեսական ակտիվության աճը բավական ցածր է տարեսկզբից՝ հիմնականում պայմանավորված այն փաստով, որ նախորդ տարիների բարձր աճի գործոնները գրեթե չեզոքացել են, և նոր գործոններ դեռևս չկան: Սակայն ապրիլին տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ-ը) որոշակիորեն արագացել է՝ կազմելով 5.4%՝ մարտի 3.7%-ի համեմատ (հիմնականում պայմանավորված նախորդ տարվա նույն ամսում աճի դանդաղմամբ՝ բազայի էֆեկտով), իսկ կուտակային՝ հունվար-ապրիլ ամիսների ՏԱՑ-ը կազմել է 4.4%՝ նախորդ ամսվա համապատասխան ցուցանիշի համեմատ արագանալով 0.3 տոկոսային կետով:

Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային, %



2025թ. հունվար-ապրիլ ամիսների ՏԱՑ-ի աճին ամենամեծ նպաստումն ունեցած ոլորտներն են ծառայությունները և առևտուրը՝ համապատասխանաբար 2.4 և 2.3 տոկոսային կետով: Դրական նպաստում է ունեցել նաև շինարարության ոլորտը՝ 0.7 տոկոսային կետով: **Արդյունաբերության ոլորտը շարունակել է ունենալ զգալի բացասական նպաստում, որի չափը կազմել է 3.3 տոկոսային կետ՝ որոշակիորեն մեղմվելով նախորդ ամսվա համեմատ՝ պայմանավորված բազայի էֆեկտով, ինչն էլ հիմնականում ազդել է տնտեսական ակտիվության աճի տեմպի արագացման վրա:**

Գծապատկեր 2. Տնտեսական ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները 2025թ. հունվար-ապրիլին, տոկոսային կետ



1.1. Արդյունաբերություն

Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, %



Արդյունաբերության ոլորտում շարունակվում են գրանցվել անկումներ, որոնց տեմպը, սակայն, որոշակիորեն մեղմվել է: 2025թ. ապրիլին արդյունաբերության ոլորտում գրանցվել է 8.7% անկում, որն էականորեն մեղմվել է մարտի 16.9%-ի համեմատ, ինչը հիմնականում պայմանավորված է բազայի էֆեկտով, քանի որ նախորդ տարվա նույն ամսում նկատվել էր աճի տեմպի էական դանդաղում (շուրջ 14.3 տոկոսային կետ): Արդյունքում փոքր-ինչ մեղմվել է կուտակային անկման ցուցանիշը՝ հունվար-մարտի -18.5%-ից դառնալով -16.1%:

Արդյունաբերության անկումը 2025թ. հունվար-մարտ ամիսներին[1] հիմնականում պայմանավորված է եղել մշակող արդյունաբերության 26.0% անկմամբ, որի նպաստումն ընդհանուր արդյունաբերության անկմանը կազմել է 18.3 տոկոսային կետ: Հանքարդյունաբերության ոլորտում նույնպես շարունակում է անկում գրանցվել, որի չափը հունվար-մարտին կազմել է 10.6%՝ արդյունաբերության անկմանը նպաստելով 1.5 տոկոսային կետով: Արդյունաբերությանը դրական նպաստում է ունեցել «էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում» ենթաոլորտը՝ 1.4 տոկոսային կետով, իսկ «ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում» ենթաոլորտի նպաստումը գրեթե զրոյական է եղել:

Մշակող արդյունաբերության նվազումը հիմնականում պայմանավորված է բազայի էֆեկտով՝ ոսկու վերաարտահանման ծավալների զգալի նվազմամբ: Վերջինս արտացոլվել է «հիմնական մետաղների արտադրություն» ենթաոլորտի շուրջ 78.7% նվազմամբ, որի նպաստումը մշակող արդյունաբերության անկմանը կազմել է 32.3 տոկոսային կետ, իսկ ընդհանուր արդյունաբերության նվազմանը՝ 22.8 տոկոսային կետ: Մշակող արդյունաբերության մյուս ենթաոլորտների շարքում էական նվազումներ է գրանցվել խմիչքների արտադրության ծավալներում՝ շուրջ 15.5%, որը մշակող արդյունաբերության անկմանը նպաստել է 1.4 տոկոսային կետով:

Մշակող արդյունաբերությանը որոշակի դրական նպաստում են ունեցել «ծխախոտային արտադրատեսակների արտադրություն», «սննդամթերքի արտադրություն» և «մեքենաների և սարքավորանքի արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում» ենթաոլորտները, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 6.6, 1.2 և 1.0 տոկոսային կետ: Մյուս ենթաոլորտների նպաստումները աննշան են եղել:

[1] Արդյունաբերության ապրիլ ամսվա տվյալները՝ ըստ ենթաոլորտների, դեռևս չեն հրապարակվել:

1.2. Շինարարություն

Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, %



Շինարարության աճի տեմպը շարունակում է արագանալ: 2025թ. ապրիլին շինարարության աճը կազմել է 17.9%՝ մարտի համեմատ արագանալով շուրջ 2.4 տոկոսային կետով: Աճի բարձր տեմպերը հիմնականում պայմանավորված են բյուջեի միջոցների հաշվին իրականացվող շինարարության աճով: Հունվար-ապրիլ ամիսներին շինարարության աճը կազմել է 15.0%՝ 1.4 տոկոսային կետով բարձր լինելով հունվար-մարտի ցուցանիշից:

1.3. Ծառայություններ

Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, %



Ծառայությունների ոլորտի աճի տեմպը դանդաղել է: Ծառայությունների ոլորտում 2025թ. ապրիլին գրանցվել է 5.6% աճ՝ մարտի համեմատ դանդաղելով

4.5 տոկոսային կետով: Հունվար-ապրիլ ամիսների աճը կազմել է 9.9%՝ հունվար-մարտի համեմատ դանդաղելով 1.6 տոկոսային կետով:

Ծառայությունների ոլորտի աճը հունվար-մարտ[2] ամիսների տվյալներով, հիմնականում պայմանավորված է ֆինանսական և ապահովագրական գործունեության շուրջ 20.1% աճով, որի նպաստումը կազմել է 6.4 տոկոսային կետ: Աճին դրական նպաստում են ունեցել նաև «տեղեկատվություն և կապ», «անշարժ գույքի հետ կապված գործունեություն» և «կացության և հանրային սննդի կազմակերպում» ուղղությունները, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 3.4, 0.7 և 0.5 տոկոսային կետ:

1.4. Առևտուր

Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, %



Առևտրի աճի տեմպը շարունակել է մնալ ցածր: Առևտրի ոլորտում 2025թ. ապրիլին գրանցվել է 3.2% աճ՝ մարտի համեմատ մնալով նույն մակարդակում: Կուտակային աճի տեմպը շարունակել է դանդաղել՝ հունվար-ապրիլին կազմելով 5.2%՝ հունվար-մարտի 6.0%-ի համեմատ:

[2] Ծառայությունների ոլորտի՝ ըստ ենթաոլորտների ապրիլ ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ[3]

Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճը, %



Արտահանման ծավալների նվազումը շարունակվում է: 2025թ. ապրիլին արտահանման անկումը կազմել է 57.3%, իսկ հունվար-ապրիլ ամիսների կուտակային անկումը՝ 60.4%: Անկման նման մեծ ծավալները հիմնականում պայմանավորված են ոսկու վերաարտահանման ծավալների չեզոքացմամբ:

Արտահանման անկումը, ըստ հունվար-մարտ ամիսների ցուցանիշների[4], մեծապես պայմանավորված է «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի (որը հենց ոսկու վերաարտահանումն արտացոլող ապրանքախումբն է) արտահանման շուրջ 83.9%-ով նվազմամբ, որի նպաստումն ընդհանուր արտահանման նվազմանը կազմել է 62.3 տոկոսային կետ: Միևնույն ժամանակ, արտահանման անկմանը նպաստել են նաև «մանածագործական իրեր», «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ», «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» և «ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր», որոնց ընդհանուր բացասական նպաստումը կազմել է շուրջ 2.0 տոկոսային կետ:

Արտահանմանը դրական նպաստում են ունեցել «պատրաստի սննդի արտադրանք» և «բուսական ծագման արտադրանք» ապրանքախմբերը, որոնց նպաստման չափերը կազմել են համապատասխանաբար 1.5 և 0.5 տոկոսային կետ: Մնացած ապրանքախմբերի նպաստումներն արտահանման աճին բավական փոքր են եղել:

[3] Արտահանման և ներմուծման նախորդ ամիսների ցուցանիշները վերանայվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից:
[4] Արտահանման ապրիլ ամսվա՝ ըստ ապրանքատեսակների տվյալները դեռևս չեն հրապարակվել:

Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճը, %



Ներմուծման ծավալի նվազումը նույնպես շարունակում է մնալ էական ցածր մակարդակում: 2025թ. ապրիլին ներմուծումը նվազել է 43.8%-ով՝ նույնպես հիմնականում պայմանավորված ոսկու վերաարտահանման ծավալներով: Հունվար-ապրիլի ներմուծման կուտակային նվազումը կազմել է 46.5%:

Ներմուծման անկումը, ըստ հունվար-մարտ ամիսների ցուցանիշների[5], առավելապես պայմանավորված է եղել «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի ներմուծման շուրջ 86.2% նվազմամբ, որի բացասական նպաստումը կազմել է 51.2 տոկոսային կետ: Ներմուծման անկմանն էականորեն նպաստել են նաև «մանածագործական իրեր», «քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք» և «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» ապրանքախմբերի անկումները՝ որոնց բացասական նպաստումները կազմել են համապատասխանաբար 0.4 և 0.3-ական տոկոսային կետ:

Ներմուծման աճին դրական նպաստում են ունեցել «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ», «պատրաստի սննդի արտադրանք» և «ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբերի աճերը, որոնց դրական նպաստումները կազմել են համապատասխանաբար 1.6, 0.8 և 0.5 տոկոսային կետ:

[5] Ներմուծման ապրիլ ամսվա՝ ըստ ապրանքատեսակների տվյալները դեռևս չեն հրապարակվել:

3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ[6]

Անվանական աշխատավարձի աճի տեմպը որոշակիորեն արագացել է նախորդ ամսվա համեմատ: Միջին ամսական անվանական աշխատավարձն ընդհանուր տնտեսությունում 2025 թվականի հունվար-մարտին նախորդ տարվա նույն ամիսների համեմատ աճել է 5.7%-ով (նախորդ ամսվա համեմատ արագացել է 1.6 տոկոսային կետով)՝ կազմելով 298,879 դրամ: Ոչ պետական հատվածում միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 5.4%-ով՝ կազմելով 330,270 դրամ: Պետական հատվածում միջին աշխատավարձն աճել է ավելի ցածր տեմպով՝ 5.2%-ով՝ կազմելով 219,542 դրամ:

Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը 2024-2025թթ. հունվար-մարտին, %



[6] Աշխատավարձի ցուցանիշը հաշվարկվում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացվող (հաշվետու ամսվան հաջորդող 25/26-րդ օրը) եկամտային հարկի և սոցիալական վճարի հաշվառման տվյալների բազայի հիման վրա և հրապարակվում է ՀՀ ՎԿ կողմից՝ յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը: Հետևաբար, ապրիլ ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

4. ՓՈԽԱՐԺԵՔ

Գծապատկեր 10. Անվանական փոխարժեքի միտումները, կուտակային աճը (%, աճը նշանակում է ՀՀ դրամի արժևորում) և միջին ամսական անվանական փոխարժեքը (դրամ)



2025թ. ապրիլին ՀՀ դրամը որոշակի արժևորվել է դոլարի նկատմամբ և արժեզրկվել եվրոյի և ռուբլու նկատմամբ: Ապրիլին ՀՀ դրամը ԱՄՆ դոլարի նկատմամբ արժևորվել է՝ 1 դոլարի դիմաց դրամի փոխարժեքը նախորդ ամսվա 393-ից դարձել է 391, իսկ եվրոյի և ՌԴ ռուբլու նկատմամբ արժեզրկվել է՝ եվրոյի համեմատ 425-ից դառնալով 438 դրամ, իսկ ռուբլու համեմատ 4.6-ից՝ 4.7 դրամ:

Սակայն, եթե համեմատենք նախորդ տարվա նույն ամիսների հետ, ապա ՀՀ դրամը հունվար-ապրիլ ամիսներին նշված բոլոր արժույթների համեմատ արժևորված է եղել՝ փոքր-ինչ ավելի քիչ չափով, քան հունվար-մարտին: Այսպես, ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի արժևորումը հունվար-ապրիլին կազմել է 1.5%, եվրոյի նկատմամբ՝ 2.7% իսկ ՌԴ ռուբլու նկատմամբ՝ 0.1%:

5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ[7]

5.1. Բյուջեի հարկային եկամուտները

Պետական բյուջեի եկամուտների աճը փոքր-ինչ արագացել է: Պետական բյուջեի հարկային եկամուտների աճը ապրիլին կազմել է 16.5%՝ էականորեն արագանալով մարտի համեմատ, իսկ հունվար-ապրիլ ամիսների աճը կազմել է 14.5%՝ արագանալով 1.3 տոկոսային կետով:

Գծապատկեր 11. Հարկային եկամուտների կուտակային աճը, %



2025թ. հունվար-ապրիլին հարկային եկամուտների աճին ամենամեծ նպաստումն ունեցած հարկատեսակներն են՝ ԱԱՀ-ն (աճը՝ 28.6%), շահութահարկը (աճը՝ 17.8%) և եկամտային հարկը (աճը՝ 10.8%), որոնց նպաստումներն ընդհանուր հարկային եկամուտների աճին կազմել են համապատասխանաբար 7.4, 4.4 և 2.8 տոկոսային կետ: Հարկային եկամուտների աճին բացասական նպաստում է ունեցել բնապահպանական և բնօգտագործման վճարների գծով մուտքերի նվազումը, ինչը պայմանավորված է նախորդ ամիսներին վճարված վճարների վերադարձով:

[7] Պետական բյուջեի ծախսերի և ընդհանուր եկամուտների վերաբերյալ տեղեկատվությունը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից դեռևս չի հրապարակվել: Հարկային եկամուտների ապրիլ ամսվա տվյալները ներկայացված են ՀՀ ՊԵԿ տվյալների բազայի հիման վրա:

Աղյուսակ 1. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների

	2024թ. Հունվար-ապրիլ		2025թ. Հունվար-ապրիլ	
	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ
Ընդամենը հարկային եկամուտներ և պետական տուրք	**6.1**	**6.1**	**14.5**	**14.5**
Ավելացված արժեքի հարկ	-3.5	-1.0	28.6	7.4
Ակցիզային հարկ	-9.0	-0.5	3.0	0.1
Շահութահարկ	3.6	0.9	17.8	4.4
Պետական տուրք	23.7	0.5	20.7	0.5
Մաքսատուրք	4.9	0.1	5.0	0.1
Բնապահպանական և բնօգտագործման վճարներ	322.1	2.8	-62.1	-2.1
Այլ հարկեր	10.0	0.3	-3.7	-0.1
Շրջանառության հարկ	16.1	0.5	22.0	0.7
Եկամտային հարկ	7.4	1.9	10.8	2.8
Սոցիալական վճարումներ	16.4	0.6	15.4	0.6

5.2. Պետական պարտք

2025թ. ապրիլի վերջին պարտքի աճի տեմպը շարունակել է արագանալ: ՀՀ պետական պարտքը դոլարային արտահայտությամբ նախորդ տարվա ապրիլի համեմատ աճել է 12.7%-ով (նախորդ ամսվա աճը՝ 11.7%)՝ կազմելով շուրջ 13.6 մլրդ ԱՄՆ դոլար: Նույն ժամանակահատվածում կառավարության պարտքն աճել է 13.4%-ով (նախորդ ամսվա աճը՝ 12.4%)՝ կազմելով 13.1 մլրդ ԱՄՆ դոլար: Ընդ որում, կառավարության պարտքի բաղադրիչներից ներքին պարտքը (դրամական արտահայտությամբ) աճել է 14.8%-ով, իսկ արտաքին պարտքը (դոլարային արտահայտությամբ)՝ 12.5%-ով: Պարտքի աճի տեմպի արագացումը հիմնականում պայմանավորված է արտաքին պարտքի աճի տեմպի արագացմամբ:

Պետական գանձապետական պարտատոմսերի տոկոսադրույքները փոքր չափով աճել են: Պետական կարճաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունը (տոկոսադրույքը) 2025թ. ապրիլին կազմել է 8.2%՝ նախորդ տարվա նույն ամսվա համեմատ նվազելով 1.3 տոկոսային կետով, սակայն նախորդ ամսվա համեմատ աճել է 0.02 տոկոսային կետով: Միջնաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքը կազմել է 9.6%՝ նախորդ տարվա նույն ամսվա համեմատ նվազելով 0.3 տոկոսային կետով, սակայն մարտի համեմատ աճելով 0.14 տոկոսային կետով:

Գծապատկեր 12. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %



6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

6.1. Գնաճ

Գծապատկեր 13. 12-ամսյա գնաճ, %



Գնաճը պահպանվել է ԿԲ թիրախային մակարդակում: 2025թ. ապրիլին գնաճի տեմպը կազմել է 3.2%՝ նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 0.1 տոկոսային կետով և մնալով ԿԲ թիրախի՝ 3±1%-ի շրջանակներում:

6.2. Ավանդներ

Գծապատկեր 14. Ավանդների 12-ամսյա աճը, %



Ավանդների աճի տեմպն արագացել է: Ավանդների ընդհանուր ծավալը 2025թ. ապրիլին նախորդ տարվա ապրիլի համեմատ աճել է 16.1%-ով՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 2.2 տոկոսային կետով: Աճը պայմանավորված է եղել ինչպես ռեզիդենտներից, այնպես էլ ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդների աճերով՝ համապատասխանաբար 18.4% և 9.3%:

Գծապատկեր 15. Տնտեսության հատվածների նպաստումներն ավանդների աճին, տոկոսային կետ



2025թ. ապրիլին ավանդների աճին ամենամեծ նպաստումն են ունեցել տնային տնտեսությունների և ձեռնարկությունների ավանդների աճերը, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 6.8 և 4.6 տոկոսային կետ:

6.3. Վարկեր

Վարկերի աճը շարունակել է արագանալ: ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի ընդհանուր ծավալը 2025թ. ապրիլին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 28.9%-ով՝ պայմանավորված ռեզիդենտներին տրամադրված վարկերի 30.4% աճով, մինչդեռ ոչ ռեզիդենտների վարկերի ծավալը նվազել է 4.7%-ով:

Գծապատկեր 16. Վարկերի 12-ամսյա աճերն ըստ վարկառուների ռեզիդենտության, %



Գծապատկեր 17. Ռեզիդենտներին տրված վարկերի 12-ամսյա աճը, %



Ռեզիդենտներին տրամադրված վարկերի կազմում աճել են ինչպես իրավաբանական անձանց, այնպես էլ տնային տնտեսություններին տրամադրված վարկերը՝ համապատասխանաբար 31.9% և 29.0%: Դրանք ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալի աճին նպաստել են համապատասխանաբար 15.7 և 14.7 տոկոսային կետով:

Գծապատկեր 18. Տնտեսության ճյուղերի նպաստումները ռեզիդենտներին տրամադրված վարկերի աճին, տոկոսային կետ[8]



2025թ. ապրիլին վարկերի աճին դրական են նպաստել բոլոր ոլորտների վարկերի աճերը, սակայն առավել նշանակալի են եղել հիպոթեքային (աճը՝ 33.8%) և սպառողական (աճը՝ 29.8%) վարկերի աճերը՝ ընդհանուր վարկերի աճին նպաստելով համապատասխանաբար 7.4 և 6.8 տոկոսային կետով:

[8] Վարկերի վերաբերյալ վիճակագրական տվյալները ներկայացվում են ինչպես ոլորտային դասակարգմամբ, այնպես էլ ըստ ռեզիդենտության և տնտեսության հատվածների դասակարգման: Տարբեր դասակարգումներով ներկայացվող տվյալները տարբերվում են միմյանցից, ինչը բացատրվում է ՀՀ ԿԲ կողմից տեղեկատվության հավաքագրման տարբերություններով և չի մանրամասնվում:

6.4. Դրամական փոխանցումներ

Գծապատկեր 19. ՀՀ բանկերի միջոցով իրականացվող դրամական փոխանցումների զուտ ներհոսքը, մլն ԱՄՆ դոլար[9]



Արտերկրից դեպի ՀՀ փոխանցվող դրամական միջոցների զուտ ներհոսքը (ներհոսքի և արտահոսքի տարբերությունը) շարունակում է մնալ ցածր մակարդակում: Դրամական միջոցների զուտ ներհոսքը 2025թ. հունվար-մարտին նախորդ տարվա նույն ամիսների համեմատ նվազել է շուրջ 48.4%-ով (կազմելով ընդամենը 143.7 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա հունվար-մարտի 278.6 մլն ԱՄՆ դոլարի դիմաց)՝ հիմնականում պայմանավորված արտահոսքի շուրջ 20.5% աճով: Դրամական միջոցների համախառն ներհոսքը նույն ժամանակահատվածում աճել է 4.7%-ով՝ կազմելով 1,271.8 մլն ԱՄՆ դոլար:

7. ԱՄՓՈՓՈՒՄ

1. ՀՀ տնտեսական ակտիվության աճի տեմպը, թեև փոքր-ինչ արագացել է, մնում է ցածր մակարդակում: Տնտեսական ակտիվության աճը ՀՀ-ում բավական ցածր է 2025 թվականին՝ հունվար-ապրիլին կազմել է շուրջ 4.4%, ինչը պայմանավորված է այն փաստով, որ նախորդ տարիների բարձր աճ ապահովող գործոնները չեզոքացել են, և նոր գործոններ դեռևս չեն ձևավորվել: Նման զարգացումների պայմաններում աճի տեմպը կմնա ցածր մակարդակում:

2. Արտահանման ցուցանիշներում վերականգնման միտումներ չեն նկատվում: Ինչպես արտահանման, այնպես էլ ներմուծման ցուցանիշները էականորեն նվազում են տարեսկզբից: Նվազման հիմնական գործոնը նախորդ

[9] Ներկայացված է ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր կատարված ընդամենը ամսական փոխանցումները և դրանց տարբերությունը՝ ԱՄՆ դոլարով:
2025թ. ապրիլ ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

տարվա ոսկու վերաարտահանման ծավալների նվազումն է, սակայն մնացած ապրանքախմբերի մասով նույնպես արտահանման աճին էականորեն նպաստող գործոններ չկան, ինչի արդյունքում ընդհանուր աճի տեմպը մնում է ցածր մակարդակում:

3. Վարկերի աճի տեմպը շարունակում է մտահոգիչ մնալ: Հատկապես բնակչությանն ուղղվող՝ հիփոթեքային և սպառողական վարկերը, աճում են բարձր տեմպով՝ էականորեն գերազանցելով ինչպես տնտեսական ակտիվության աճի տեմպին, այնպես էլ աշխատավարձերի և արտաքին դրամական փոխանցումների աճի տեմպին: Բնակչության եկամուտների համեմատ պարտավորությունների էական բարձր աճը կարող է հետագայում ֆինանսական համակարգի համար ռիսկեր առաջացնել:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: